

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՆԵՐԻ ԶԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Պժշկական թանկ և առաւելու 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Մարիամ Ստեփանեան Ջաշխանաց, որդիք՝ Մակար, Ալեքսանդր և Նիքիտոֆօր Անդրեասեան, դստերը՝ Եղիսարէթ Գալստեան, Հովհաննէս Վանեան և Շուշանիկ Ասիլ-բէգեան, հարսներ՝ Մարթա և Դաւիթա Ջաշխանացի ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին, ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր անմոռանալի աժուանու, իսկ ֆառաշահները իրանց թանգագին հօր, աներով և սկեսար՝

ԱՆԴՐԵԱՍ ՄԱԿԱՐԵԱՆ ԶԱՇԽՏԵԱՆՑԻ

մահը: Յուզարկաւորութիւնը իր սեփական տնից (Петхаинскій подѣмъ, возлѣ дѣвичьяго монастыря, д. № 7) դէպի Մոզնուս. Գէորգ եկեղեցին՝ կիրակի, ամսին 18-ին, առաւօտեան 10 ժամին: Թաղումը նոյն օրը Նովիկանքի գերեզմանատանը:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Կամաւոր նաւատորմի կատարած դերը: Ներքին Տեսութիւն. Վ. Կ. Ֆօն-Պլեյէ. Թէ-յարաններ. Չեխովի մահուան առիթով. Նա-մակ Ալալայի յայտ. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պա-տերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — Հե-ՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿԱՄԱՐՈՐ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԿԱՏԱՐԱԾ ԴԵՐԸ

Հեռագրական գործակալութեան հա-ղորդարութիւնները մեր ընթերցողները գիտեն, որ ուստաց Կամաւոր Նաւատորմի երկու նաւեր, այն է «Սմոլենսկ» և «Պե-տերբուրգ», անցնելով Սև ծովից իւ-րե անուարական նաւեր, երբ հասել են Կարմիր Ծով՝ սկսել են գործել իբրեւ զինուորական նաւեր և խուզարկութեան ենթարկել կարմիր ծովով անցնող օտա-րազգի նաւերը: Այդ դէպքի առիթով հարց ծագեց քաղաքական մամուլի մէջ թէ արդեօք Թիւրքիան իրաւունք ունէ՞ր թոյլ տալու այդ նաւերին անցնել Սև ծովից Դարդանեղի նեղուցով դէպի Մի-ջերկրական ծով:

Որպէս զի մեր ընթերցողները տեղե-կութիւն ունենան միջազգային այն դաշ-նագիրների մասին, որոնք գոյութիւն ու-նեն շուրջոված հարցի վերաբերութեամբ, մենք, օգտվելով «H. B.» լրագրի ցուցում-ներից, առաջ կը բերենք էական մի քա-նի կէտեր:

Ներօպական վեց պետութիւն, այն է Ռուսաստանը, Թիւրքիան, Մնգլիան, Ֆրանսիան, Աւստրիան և Պրուսիան 1841 թ. խն ստորագրեցին մի դաշնագիր, որով արգելվում էր զինուորական նա-ւերի անցնելը Դարդանեղի և Բոսֆորի նեղուցներով: Այդ դաշնագրի մէջ ասված է հետևեալը՝

«Սուլթանը յայտարարում է, որ նա հաստատ զիտաւորութիւն ունի ապա-գայում գործադրել իբրեւ անփոփոխ սահմանված սկզբունք իր պետու-թեան վաղեմի այն կանոնը, որով միշտ արգելված է եղել օտար պետութիւն-ների նաւերին մտնել Դարդանեղի և Բոսֆորի նեղուցները և քանի որ Բար-ձըր Դուռը խաղաղութեան մէջ է, նորին սուլթանական մեծութիւնը չի թոյլ տայ ոչ մի օտար նաւի մուտքը դէպի այդ նեղուցները»:

Բացառութիւն արված է միայն թեթև զինուորական նաւերի համար, որոնք պաշ-տօն ունեն գնապանատների պէտքերին ծառայելու:

Այդ դաշնագիրն աննպաստ էր Ռուսաս-տանի համար, որովհետև փակում էր նրա նաւերի համար դռները, իսկ միևնույն ժամանակ չէր ապահովում ռուսական ծովագնացները օտար նաւատորմերի յարձա-կումներէ: Նեղուցները փակ են օտար զինուորական նաւերի համար խաղաղ ժա-մանակ, իսկ երբ Թիւրքիան պատերազմի մէջ է, ամենաւաղ Ռուսաստանի դէմ, այն ժամանակ Թիւրքիայի դաշնակիցների նաւատորմերը կարող են ազատորէն, ա-

ռանց դաշնագիրները խախտելու, մտնել Սև ծով: Ինչպէս յայտնի է՝ Նրբի պատե-րազմը ապացուցեց այդ բանը փայլուն կերպով: Լօնդօնի դաշնագիրը (1871 թ. խն) և Բերլինի դաշնագիրը (1878 թ. խն) հաստատեցին 1841 թ. խն պարզեան դաշնագիրը:

Որովհետև ներկայումս Թիւրքիան խա-ղաղութեան մէջ է, ուստի ռուսական զինուորական նաւերի համար փակված պէտք է համարվեն նեղուցները: Եւ եթէ «Պետերբուրգ» և «Սմոլենսկ» նաւերը, նեղուցները անցնելու ժամանակ, եղել են զինուորական նաւեր կամ կրէյսէրներ, այն ժամանակ նրանց անցնելը համապատաս-խան չէ գործող միջազգային կանոններին: Ինչ է սակայն ուստաց Կամաւոր Նա-ւատորմը:

Կամաւոր Նաւատորմի շղեւաւերը եր-կու պաշտօնի են ծառայում: խաղաղ ժա-մանակ նրանք գործում են իբրեւ առևտ-րական նաւեր, պահպանելով հաղորդակ-ցութիւն Օղեսասի և Հեռաւոր Արեւելի միջև, իսկ պատերազմի ժամանակ փո-խարկվում են կրէյսէրների և զինուորա-տար նաւերի: Այդ տեսակ են և անգլիա-կան մի քանի նաւային ընկերութիւնների նաւատորմերը, ինչպէս օրինակ «White Star Line», «Cunard Company», «Royal Mail Steam Packet Company» և «Pacific Steam Navigation Company» ընկերութիւնների նա-ւատորմերը:

Այս անգամ էլ Կամաւոր Նաւատորմի երկու նաւերը՝ «Պետերբուրգ» և «Սմո-լենսկ», ճանապարհ են ընկել իբրեւ ա-ռևտրական նաւեր, բեռնաւարված ռազ-մամթերքով, անցել են նեղուցները առանց արգելքի և երբ հասել են Կարմիր ծովի ափերին, դուրս են հանել նաւի միջից թնդանօթները և նրանց սարքելով շղե-ւաւերի վերին մասում, դարձրել են այդ նաւերը մի տեսակ կրէյսէրներ և սկսել այնուհետև գործել իբրեւ պատերազմական նաւեր, պատերազմական դրօշակով:

Սա է գործի իսկութիւնը, որ առա-ջացրել է քաղաքական մամուլի մէջ ի-րաւական և քաղաքագիտական տեսա-կէաներով մի եռանդուն վիճաբանութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վ. Կ. Ֆօն-Պլեյէ:

Անցեալ օրը, օր-ցերեկով Պետերբուրգի բա-ւական բանուկ ու մարդաշատ մասում մար-դասպանի ուսուցը կեանքից զրկեց ներքին գործերի միտրաթ ֆօն-Պլեյէին:

Վ. Կ. Ֆօն-Պլեյէին ծնվել է 1846 թ. խն և իր կրթութիւնն ստացել է Մոսկվայի համալսա-րանի իրաւաբանական բաժնում: Նա ծառա-յութեան է մտել 1868 թ. խն և երկար ժամա-նակ վարել է պրօկուրօրի օգնականի և պրօ-կուրօրի պաշտօնները Վլադիմիր, Տուլայի, Վլոյդգայի, Վարչաւայի և վերջապէս Պետեր-բուրգի դատաստանական հիմնարկութիւննե-րում: 1879—81 թ. խն ամենախառնակ ու դժ-ուարին ժամանակներում նա Պետերբուրգի դատաստանական պալատի պրօկուրօր էր և պարտաւորութիւն էր ստացել հանգուցեալ Ա-

լեքսանդր II կայսրին անձամբ զեկուցանել Չմորային պալատում խաղաղութիւնի առաջացրած պայթումի գործի քննութեան մասին: 1881-ին նա նշանակվեց պետական ոստիկանութեան ղեկավարման տեսուչ, իսկ յետոյ էլ բաւա-կան երկար ժամանակ ներքին գործերի մի-նիստրի օգնականի պաշտօնն էր վարում կոմս Դ. Ա. Տօլստոյի և Ի. Ն. Դուրնօվի ժամանակ: Այդ պաշտօնը վարած ժամանակը նա բաղա-թիւ ընդհանուր պետական գործերի համար կազմված յանձնաժողովների անդամ ու նախա-գահ է եղել: 1894 թ. խն նա նշանակվեց Պե-տական բարուգր, իսկ 1900 թ. խն նաև ստատու-սեկրետար Ֆինլանդիայի գործերի: Վերջապէս 1902 թ. խն գաւառներ, Դ. Ս. Սիլվիա-գինի մահից մի քիչ յետոյ՝ Վ. Կ. Պլեյէին նա-նակվեց ներքին գործերի միտրաթ, պահելով իր ձեռքին և ֆինլանդական գործերի ստատու-սեկրետարի խոշոր պաշտօնը: Իբրեւ միտրաթ, նա առաջ ընդ մի քանի օրէնադրական շատ կարևոր խնդիրներ, ինչպէս օրինակ՝ նահան-գապետների իշխանութիւնն ընդարձակել, գիւ-ղացիների վարչութիւնը վերակազմել և գիւ-ղացիական օրէնադրութիւնը վերաբնոյնել, բան-ւորների համար աւագներ ընտրել և գործա-ւորներին վարձատրել գործող դէպքերի ժա-մանակ, Պետերբուրգում նոր տեսակի բաղա-բային պոլիտեխնիկ մտցնել, գործարանական վերահսկողութեան վարչութիւնը ֆինլանդների միտրաթութիւնից հանել և ենթարկել ներքին գործերի միտրաթութեան և այլն:

Իբր անձնաւորութիւն, Վ. Կ. շատ ուժեղ և որոշ ծրագրի տէր մարդ էր: Նա իր բունած ընթացքով շատ զօրեղ ազդեցութիւն ունեցաւ ընդհանուր պետական կեանքի ու խնդիրների ընթացքի վրա:

Թ Ե Յ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Քաղաքային վարչութեան և ուրիշ հասարա-կական ու մասնաւոր հիմնարկութիւնների կողմից ձեռք առնված միջոցների մէջ առաջին տեղերից մինչ է բռնում անշուշտ թէյարան-ների բացումը, որոնք միջոց են տալիս քա-ղաքի արքայազնականութիւնը եւսացած շուր ու-նենալ հում և վատառողջ ջրի փոխարէն:

Թիֆլիսում գործող էթանագին և ձրի ձա-շարանների ընկերութիւնն ևս ահա որոշել է էթանագին թէյարան բաց անել: Այս նպա-տակով վարձել է արդէն մի յարմար բնակա-րան Օլգինսկայա փողոցում, իշխան Բէկթա-բէգովի տանը, որը շուտով պատրաստ պիտի լինի և սկսի իր գործողութիւնները: Այդ թէ-յարանը ոչ միայն գործելու է սպասվող էպի-դէմիայի ժամանակ, այլ և շարունակ:

Աւելորդ իսկ է բացատրել թէ էթանագին և ձրի թէյարանների առած օգուտը որքան մեծ է, մասնաւոր է կպիդէմիայի ժամանակ, այդ կարգի թէյարանները կը գրաւեն դէպի ի-րանց հասարակութեան բանւոր և աղքատ դասակարգերն և կունենան առողջ և բարեբա-րազեցութիւն մարդկային օրգանիզմի վրա և կը հեռացնեն մարդկանց ֆլասարի գինե-աներից:

Շնորհաւորելով յիշեալ ընկերութեան այս ձեռնարկութիւնը, ցանկալի էր, որ կարող ան-ձինք ևս բաց անէին նոյնանման թէյարաններ բաղաբի զանազան մասերում աւելի մեծ բազ-մութեան համար:

Մենք կը յայտնենք, իր ժամանակին, թէ-յարանի բացման օրը և կը խօսենք նրանից օգտվելու պայմանների մասին:

ՉԵԽՈՎԻ ՍԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Մեռաւ Չեխովը: Ամբողջ ուսու մամուլը ող-բում է նրա վաղաժամ մահը: Նրա վրա ար-տավում են ոչ միայն արմատական ու առա-ջադէմ լրագրիչները, այլ և բոլոր կեղծ ու ան-կեղծ պահպանողականները, նոյն իսկ օպպօ-սիտներն ու ընդհանրապէս:

Սահող արցունքներ մղի կաթիլների հետ

միտին լավում են ամեն կողմից զննատու-թիւններ: Մի քանիսը երեւի ցաւի ու կսկծի չափազանց թարմ տպաւորութեան տակ՝ Չե-խովին դարձնում են Ռուսաստանի, գուցէ և ամբողջ մարդկութեան հանճարներից մէկը: Դա շատ բնական է գերեզմանի վրա ասվող ձուռե-րում և մտերմ ընկերների գրած յօդուած-ներում թարմ դադաղի, թանգագին դիակի դիմացը:

Ուրիշները, դրա հակառակ, ուզում են նուե-մացնել Չեխովին: Այդ վերջինները չեն ուզում նրան հանաչել իբր Անտօն Չեխով, այլ ըն-դունում են միայն նրա «Չեխօնտէ» անունով գրած ժամանակի արդիւնները:

Ամենից բնորոշ ու վճռական այդ երկրորդ տեսակի գրողների մէջ իշխան Մեչչերսկին է՝

«Աւանդ, այն միջավայրը, որի մէջ ընկաւ Չեխօնտէ իր սկզբի բայելիցը, ասում է իշ-խանը, ուղղակի վատառողջ, սովորական ինտելիգենցիայի խղճով միջավայրն էր, ուր գրելը, ինչպէս և իդէալ միայն արհեստ է, ուր չը կայ ոչ ժողովրդական իդէաների պաշտամունքը, ոչ գեղարուեստը գեղարուես-տի համար»-ի պաշտամունքը, ոչ ճշմարտու-թեան պաշտամունքը, այդ բառի վեհ մշա-րով, և ուր գրականութիւնը մասաւոր պրօ-լետարիատի օրավարձ ստանալու միջոցնե-րից մէկն է»:

Անուշական, արիստոկրատ, գուտարիւն իշ-խանը այդ պաշտամունքները, ի հարկէ, հաւա-կանում է «իշխանական» ձևով: Նրա համար այդ «սովորական ինտելիգենցիայի միջավայրը» ցած, ստոր է, անարժան և անվայել «բարձր ազնւականութեան» համար: Լաւ գրողը, մաս-ծում է իշխան Մեչչերսկին, անպատճառ աղնական պէտք է լինի—բուն ուսու դի-րեանքին:

«Եւ չեն ուզում վատաբանել այդ միջա-վայրը, շարունակում է իշխանը. բայց ամեն մի անկողնակալ խելքը մարդ կը համա-ձայնի ինձ հետ, որ նա կարող էր ժողո-վրդի միջից իր մէջ մտած կուսական տա-ղանդին առաջ միայն այն, ինչ որ ինքն ու-նէր. բայց նա ունէր միայն բացառական յարաբերութիւն դէպի կեանքը, որի մէջ զիջաւոր նստան անփողովուրդ և գուտ ու-ղեղային յուսալարութիւնն է»:

Մտքամեղ հրապարակաբօս այնպիսի պայման է դնում, որ մարդ վախենում է չը համաձայնել նրա հետ. «ամեն մի խելք մարդ կը համաձայնի ինձ հետ»—ուրեմի՜ ու չը հա-մաձայնի՜ նա խելք մարդ չէ: Դա վիճելու անվայել ձև է, եթէ չառնենք աւելին:

«Ամենը կը հասկանան իմ միտքը, եթէ ես թանձրացած օրինակներով լրացնեմ նրան և ասեմ, որ Պուշկինին դատարարակող կա-րամգինի և Չեխովին դատարարակող ժուր-նալիստ Սուլօրինի միջև մի անագին ան-դունդ կայ»:

Երկու ձեռքով ստորագրում ենք իշխանի ասածները՝ տակ: Անպիսի տարբերութիւն կայ պատմաբան, թէ և մի քիչ շօլմիտ, Կարամզինի և օրական 5 տեսակ շապիկ ու համազմունք փոխող ձարպիկ «գաղթթի» Սու-վօրինի միջև:

Այդ կէտում իշխանի արդար է իսկապէս: «Չեխովի այդ դատարարակող, որի մօտ եկաւ երիտասարդ Չեխովը, այդ Սուլօրինը Մօս-կվայի լրագրական բօհեմայի օրավարձ աշ-խատանքում արդէն փչացած մարդ էր»:

Հաւատում ենք. Սուլօրինը փչացած էր արդէն... Բայց ինչո՞ւ այդպէս օլիմպական արհամարհանքով խօսել «ժուրնալիստների բօհեմայի» մասին: Այդ բօհեման է արտագրել ուսու ներկայ բոլոր թարմ, ցնցող գրչիներին. Չեխով, Դոբլին, Մնգլեյի՜ ուսու գրականութեան այդ նոր երրորդութիւնն այդ միջավայրի ծը-նունդ են: Իշխանը պնդում է, որ Սուլօրինի և Մօսկվայի լրագրական բօհեմի միջավայրը

«խանգարեցին Չեխովին Պուշկին դառնա-լու: Իսկ նա, կարծում եմ ես, կարող էր Պուշկին դառնալ, եթէ որ ընկնէր ուսու աղ-նական միջավայրի մէջ, այդ բառի բարձր մտքով, և ստանալ դատարարակողութիւն ժո-ղովրդի հետ հոգեպէս միաւորված, այն ժո-ղովրդի՜ որից դուրս էր եկել, և ոչ նրանից անջատված»:

Այժմ պարզվեց իշխանի միտքը: Չեխովը պէտք է աշակերտած լինէր մի որ և է ուսու

